ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Թիվ 021/20

«30» հունիսի 2015թ.

*Հայաստանի Հանրապետության*
*Լոռու մարզպետ պարոն՝*
*Ա. Նալբանդյանին*

*Հարգելի պարոն Նալբանդյան.*

*Հարգելի պարոն Նալբանդյան.*

Ձեզ է ներկայացվում Հալավար համայնքի ավագանու թիվ 08-Ա, 09 որոշումները և Համայնքի ղեկավարի թիվ 06, 07 որոշումները :

Առդիր՝ 5 թերթ

*Հալավար*
*համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

---


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք,
հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori @mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ու Մ

25-ը հունիսի 2015 թվականի
N/ 06

## ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Հալավար համայնքի ավագանու 2015թվականի հունիսի 25-ի «Հալավար համայնք 2015թվականի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 08-Ն որոշմամբ*

*Որոշում եմ.*

Հաստատել Հալավար համայնքի 2015 թվականի փոփոխված բյուջեի եկամտային և ելքային մասերի բաշխումը ըստ եռամսյակների/ հավելված1,2/:

*Հալավար համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք,
հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori @mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը հունիսի 2015 թվականի
N/ 07

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 5-րդ կետով, 43-րդ հոդվածի 2-րդ կետով և համաձայն Հալավար համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 09որոշման.*

*Որոշում եմ՝*

Հալավար համայնքի 2015թ .բյուջեի ծախսային մասի՝ բաժին 10, խումբ 7, դաս 1-ից /սոցիալական հատուկ արտոնություններ/, ըստ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից դուրս գրել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ և տալ դրամական օգնություն համայնքի բնակիչ Էմին Սերգոյի Եղիազարյանին:

*Հալավար*
*համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25-ը հունիսի 2015 թվականի**

**N 08-Ն**

## ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով***

*Հալավար գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.*

Հաստատել Հալավարի գյուղական համայնքի 2015թվականի փոփոխված բյուջեն՝ 1. Եկամուտների գծով՝

Ընդամենը- 7.011.400 (յոթ միլիոն տասնմեկ հազար չորս հարյուր) դրամ

*. վարչական բյուջեի մասով ՝ 7.011.400(յոթ միլիոն տասնմեկ հազար չորս հարյուր) դրամ*
*. ֆոնդային բյուջեի մասով՝ 0( զրո) դրամ:*

2. Ծախսերի գծով ՝
Ընդամենը- 8.132.900 ութ միլիոն մեկ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր դրամ
*. վարչական բյուջեի մասով ՝ 7.011.400 (յոթ միլիոն տասնմեկ հազար չորս հարյուր) դրամ*
*. ֆոնդային բյուջեի մասով՝ 1.121.500 (մեկ միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) դրամ*

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (3)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Աբազյան Գոհար Երվանդ* | | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | | | |

*Հալավար*
*համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25-ը հունիսի 2015 թվականի**

N/ 09

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հալավար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները.*

*Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1. Բավարարել համայնքի բնակիչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (3)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Արազյան Գոհար Երվանդ* | | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | | | |

*Հալավար համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Հալավար համայնքի ավագանու

2015 թվականի 25 հունիսի N 09 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Եղիազարյան Էմին Սերգոյի -- 20000(քսան հազար) դրամ,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 20000(Քսան հազար) դրամ:

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

(ստորագրություն) Գոհար Թադևոսյան
(անուն,ազգանուն)